



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1561-Ա

«ԳՐԻԳ ՏՈՒՐ» ՍՊԸ-ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով «Գրիգ Տուր» ՍՊԸ-ի տնօրեն Հեղինե Ամիրխանյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի. համաձայն «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ 2026 թվականի մայիսի 20-ի N19-854 տեղեկատվության և ՀՀ ՇՄՆ Էկոպարեկային ծառայության կողմից կազմված N 040226105 արձանագրության՝ «Գրիգ Տուր» ՍՊԸ-ին վարձակալությամբ պատկանող հողատարածքում առկա են ինքնակամ շինություններ՝ ափամերձ հատվածում՝ բետոնյա հիմքով կից շինություններ, բետոնյա հարթակ, 1 մ բարձրությամբ հենապատ, լճի մեջ կառուցված «բեմահարթակ»։ Հարուցված վարչական վարույթի շրջանակներում «Գրիգ Տուր» ՍՊԸ-ի տնօրեն Հեղինե Ամիրխանյանը պատշաճ ծանուցվել է։ 11.06.2026 թվականին «Գրիգ Տուր» ՍՊԸ-ի ներկայացուցիչները ներկայացել են Սևանի համայնքապետարան և մասնակցել են ինքնակամ շինությունների մասով լուծմանը։ Ըստ նրանց բացատրագրի՝ շինությունները կառուցվել են մինչև 2005 թվականը և համարվել են ոչ հիմնական շինություններ։ Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետ կապված շինությունների մի մասը հայտնվել է ջրում։ ՍՊԸ-ի տնօրինությունը հավաստիացնում է, որ իրենք գործել են օրենքի շրջանակներում և պատրաստ են համայնքապետարանի հետ համագործակցության՝ համայնքապետարանի կողմից ներկայացվող պահանջները կատարելու ուղղությամբ, իսկ հենապատը կառուցվել է միայն այն նպատակով, որ լճի ջրերը չողողեն հարևանությամբ գործող ավտոճանապարհը։ Հիմնավորված է համարվում այն փաստը, որ «Գրիգ Տուր» ՍՊԸ-ի տնօրենը խախտել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության, ինքնակամ կառուցել կամ տեղադրել է շինություններ, բետոնյա հարթակ, 1 մ բարձրությամբ հենապատ և լճի մեջ «բեմահարթակ»։ Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում։ Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ։ Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն։

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով, **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել «Գրիգ Տուր» ՍՊԸ-ին վարձակալությամբ տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները՝ ափամերձ հատվածում՝ բետոնյա հիմքով կից մետաղական շինությունները, բետոնյա հարթակը, լճի մեջ կառկառուցված «բեմահարթակը իր օժանդակ շինություններով:
2. Առաջարկել ՀՀ ՆԳՆ Ոստիկանության համայնքային գլխավոր վարչության Սևանի ներքին գործերի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. «Գրիգ Տուր» ՍՊԸ-ի տնօրեն Հեղինե Ամիրխանյանին ազատել վարչական պատասխանատվությունից վարչական տույժ նշանակելու ժամկետը լրացած լինելու հիմքով:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1562-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48', 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի մայիսի 21-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում վարձակալության իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան հողամաս հասցեում գտնվող 3.81792 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողատարածքը /ծածկագիր՝ 05-024-0293-0083/ 25 տարի վարձակալության իրավունքով, 38180 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Հրաչիկ Ժիրայրի Հովսեփյանին:
2. Հրաչիկ Ժիրայրի Հովսեփյանի հետ կնքել վարձակալության իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի վարձակալության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1563-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48¹, 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի մայիսի 21-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում վարձակալության իրավունքով հողատարածքների տրամադրման մրցույթային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր հողամաս հասցեում գտնվող 0.771582 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողատարածքը /ծածկագիր՝ 05-030-0126-0015/ 25 տարի վարձակալության իրավունքով, 7720 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Անդրանիկ Զորիկի Միրաքյանին:
2. Անդրանիկ Զորիկի Միրաքյանի հետ կնքել վարձակալության իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի վարձակալության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1564-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 13-Ի N 858-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի ապրիլի 13-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 858-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - 1) որոշման նախաբանում, 1-ին և 2-րդ կետերում՝ «36. 42քմ մակերեսով ավտոտնակը» բառերի փոխարեն կարդալ «36. 33քմ մակերեսով ավտոտնակը» բառերը;
 - 2) որոշման 1-ին կետում՝ «36. 42քմ մակերեսով հողատարածքը» բառերի փոխարեն կարդալ «36. 33քմ մակերեսով հողատարածքը» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1565-Ա

**ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. թիվ 844-Ն որոշման 46.2 կետի «ա» ենթակետով և հիմք ընդունելով Անուշ Արտուշի Շաքարյանի դիմումը՝ կառուցապատման աշխատանքներ կատարելու համար համապատասխան հողատարածք տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Կառուցապատման աշխատանքներ կատարելու համար Անուշ Շաքարյանին տրամադրել՝ Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 11 / 3 հողամաս հասցեում գտնվող 19 քմ մակերեսով հողատարածքը /կադաստրային ծածկագիր՝ 05-004-0003-0248, վկայական՝ 18062026-05-0059/ տաղավարի տեղադրման նպատակով, 15 տարի կառուցապատման իրավունքով, 1քմ՝ տարեկան 300 դրամ կառուցապատման վճարով:
2. Զգուշացնել Անուշ Շաքարյանին՝ հատկացված տարածքում կառուցապատման աշխատանքները սկսել միայն համապատասխան փաստաթղթերի փաթեթը Սևանի համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1566-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 3-Ի N 717-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2025 թվականի ապրիլի 3-ի «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 717-Ա որոշման 1-ին կետը կարդալ նոր խմբագրությամբ՝
- 1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00350հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խ. Աբովյան փողոց
թիվ 11 / 6 հողամաս հասցե»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1567-Ա

**ՀՈՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԻ ՈՒՂՂՄԱՆ ԵՎ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել կառուցապատման իրավունքով քաղ. Սամվել Սահակյանին պատկանող, ք. Սևան, Սայաթ-Նովա և Նաիրյան փողոցների խաչմերուկից հարավ հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 2159448, տրված՝ 24.07.2007թ. / գծային չափերը, տեղադիրքը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ կառուցապատման իրավունքով Սամվել Սահակյանին պատկանող, ք. Սևան, Սայաթ-Նովա և Նաիրյան փողոցների խաչմերուկից հարավ հասցեում գտնվող անշարժ գույքի գծային չափերը և տեղադիրքը:
2. Ք. Սևան, Սայաթ-Նովա և Նաիրյան փողոցների խաչմերուկից հարավ հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 162 / 6 տաղավար հասցե:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1568-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ
ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. թիվ 844-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Մերութան Ազատի Ղարազյոզյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 1 / 4 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 25032021-05-0005/ զբաղեցրած 0.012հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Մերութան Ազատի Ղարազյոզյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 1 / 4 հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած 0.012հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.012հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, ք. Սևան, Հրազդանի փողոց թիվ 44 / 2 հողամաս, վկայական՝ 15062026-05-0071/, ուղղակի վաճառքի կարգով օտարելով Մերութան Ազատի Ղարազյոզյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 2887. 5 դրամ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1569-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ
ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. N 286 որոշման 43-րդ կետով և հիմք ընդունելով հիմք ընդունելով քաղ. Հայկ Մնացականյանի դիմումը՝ վարձակալության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Սեմյոնովկա հասցեում գտնվող 0.1595հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 21082020-05-0019/ ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Վարձակալության իրավունքով Հայկ Դավիթի Մնացականյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Սեմյոնովկա հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության 0.1595 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարել Հայկ Դավիթի Մնացականյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 17150դրամ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հունիսի 23
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1570-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ
ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. N 286 որոշման 43-րդ կետով և հիմք ընդունելով «Պապրիկա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հիլդա Մախմուդյանի դիմումը՝ վարձակալության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող 0.04043հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 09062026-05-0019/ ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Վարձակալության իրավունքով «Պապրիկա» ՍՊԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության 0.04043հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարել «Պապրիկա» ՍՊԸ-ին հողի կադաստրային արժեքը՝ 4350 դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1571-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 14-Ի N 549-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի մարտի 14-ի «Հասցե տրամադրելու մասին» N 549-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1572-Ա

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 18.11.2025թ. N125-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Կարապետ Պողոսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Կարապետ Պողոսյանի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 118 հասցեում կառուցված ավտոտնակի շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1573-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԸ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Գուլանյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. «ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԸ» ՍՊԸ-ին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, գ. Ծվագյուղ հասցեում գտնվող հողամասում կաթի վերամշակման արտադրամասի կառուցման համար:
2. «ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԸ» ՍՊԸ-ն պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1574-Ա

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Վանիկ Աբգարյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Վանիկ Աբգարյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 10 / 40 հասցեում գտնվող հողատարածքում տաղավարի կառուցման համար:
2. Վանիկ Աբգարյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հունիսի 23
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1575-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 1457-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հունիսի 12-ի «Հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին» N 1457-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1576-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 1458-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հունիսի 12-ի «Հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին» N 1458-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1577-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ
ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. N 286 որոշման 43-րդ կետով և հիմք ընդունելով «Պապրիկա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հիլդա Մախմուդյանի դիմումը՝ վարձակալության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Դդմաշեն հասցեում գտնվող 0.05հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 09062026-05-0051/ ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Վարձակալության իրավունքով «Պապրիկա» ՍՊԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Դդմաշեն հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության 0.05 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարել «Պապրիկա» ՍՊԸ-ին հողի կադաստրային արժեքը՝ 5375 դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2026 թվականի թիվ 1578-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 47 /վկայական՝ 24012025-05-0066/ և Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 47 / 1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /վկայականներ՝ 24012025-05-0066 և 24012025-05-0090/ միավորել, միավորված գույքերի համար տրամադրել ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 47 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 23
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2026 թվականի թիվ 1579-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. թիվ 844-Ն, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Հռիփսիմե Սերժիկի Ավագյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին պատկանող, Սևան համայնք, գյուղ Դոմաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 10042026-05-0033/ զբաղեցրած 1.004 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին պատկանող, Սևան համայնք, գյուղ Դոմաշեն հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 1.004 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.14831 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գյուղ Դոմաշեն, վկայական՝ 10062026-05-0042՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին՝ հողի կադաստրային արժեքը՝ 119.400 դրամ վճարելու պայմանով:
2. Սեփականության իրավունքով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին պատկանող, Սևան համայնք, գյուղ Դոմաշեն հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 1.004 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.13908 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գյուղ Դոմաշեն, վկայական՝ 11062026-05-0096/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին՝ հողի կադաստրային արժեքը՝ 171.425 դրամ վճարելու պայմանով:
3. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հունիսի 24
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2026 թվականի թիվ 1580-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ
ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. թիվ 844-Ն, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Հռիփսիմե Սերժիկի Ավագյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին պատկանող, Սևան համայնք, գյուղ Դդմաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 07042026-05-0041/ զբաղեցրած 1.074 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին պատկանող համայնք Սևան, գյուղ Դդմաշեն հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 1.074 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 1.0253 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գյուղ Դդմաշեն, վկայական՝ 10062026-05-0093/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով՝ «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին՝ հողի կադաստրային արժեքը 651.075 դրամ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 24
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2026 թվականի թիվ 1581-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 10.06.2026թ. N 1452-Ա
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 10.06.2026թ. «Հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին» N 1452-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 24
ք. Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2026 թվականի թիվ 1582-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. թիվ 844-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Հոփսիմե Ավագյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին պատկանող, Սևան համայնք, գյուղ Դդմաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 03062026-05-0047/ զբաղեցրած 1.1553 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին պատկանող, Սևան համայնք Սևան, գյուղ Դդմաշեն հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 1.1553 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.00621 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գ. Դդմաշեն, վկայական՝ 26032026-05-0070/ ուղղակի վաճառքի կարգով օտարելով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին՝ հողի կադաստրային արժեքը՝ 5.000 ՀՀ դրամ վճարելու պայմանով:
2. Սեփականության իրավունքով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին պատկանող, Սևան համայնք, գյուղ Դդմաշեն հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 1.1553 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.05451 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գ. Դդմաշեն, վկայական՝ 27052026-05-0051/ ուղղակի վաճառքի կարգով օտարելով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին՝ հողի կադաստրային արժեքը՝ 43.875 ՀՀ դրամ վճարելու պայմանով:
3. Սեփականության իրավունքով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին պատկանող, Սևան համայնք, գյուղ Դդմաշեն հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 1.1553 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.08834 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գ. Դդմաշեն, վկայական՝ 26032026-05-0042 / ուղղակի վաճառքի կարգով օտարելով «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ին՝ հողի կադաստրային արժեքը՝ 71.125 ՀՀ դրամ վճարելու պայմանով:
4. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հունիսի 24
ք.Սևան



1709



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2026 թվականի թիվ 1583-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 1479-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հունիսի 15-ի «Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի մայիսի 21-ի N 1235-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1479-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հունիսի 24
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2026 թվականի թիվ 1584-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Մարզարիտա Թադևոսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Մարզարիտա Թադևոսյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս թիվ 7 / 9 հասցեում գտնվող հողատարածքում պարսպի կառուցման համար:
